



Քաղաքացիական ինտեգրման տարրական քննությունը արտասահմանում

Դեպի Նիդերլանդներ

Դուք ցանկանում եք ապրել ձեր գուզընկերոջ հետ Նիդերլանդներում: Նախքան Նիդերլանդներ մեկնելու թույլտվություն ստանալը ձեզ հարկավոր է հաջողությամբ անցնել քաղաքացիական ինտեգրման տարրական քննությունը արտասահմանում (կարճ՝ քաղաքացիական ինտեգրման տարրական քննություն): Այն ամենը ինչ հարկավոր է իմանալ քաղաքացիական ինտեգրման տարրական քննության մասին կարող եք կարդալ սույն գրքույկում:

Ինտեգրումը Նիդերլանդներում

Եթե ցանկանում եք ապրել Նիդերլանդներում, ապա պետք է անեք հետևյալ քայլերը՝

- Հարկավոր է սովորել նիդերլանդերեն լեզուն, ինչը ձեզ հնարավորություն կտա ավելի հեշտ ինտեգրվել Նիդերլանդների հասարակությանը:
- Հարկավոր է հասկանալ Նիդերլանդների ձևավորման հիմունքները և այն թե ինչպես ենք վերաբերվում միմյանց Նիդերլանդներում:
- Հարկավոր է մասնակցել հասարակությանը, օրինակ՝ աշխատելով կամ կամավոր աշխատանքի կատարմամբ: Հնարավոր է նաև կրթություն ստանալու միջոցով, ինչ-որ միությանը անդամակցելով կամ պարզապես հարևանների հետ շփվելու միջոցով:

Այս երևույթը նաև անվանում ենք ինտեգրացիա կամ ինտեգրում:

Արդյո՞ք ձեզ հարկավոր է նաև մասնակցել քաղաքացիական ինտեգրման տարրական քննությանը:

Քաղաքացիական ինտեգրման տարրական քննությանը մասնակցելու պարտադրության հարցը կախված է օրինակ ձեր տարիքից կամ ձեր ազգությունից:

Խնդրվում է այցելել Ներգաղթի և հպատակագրման ծառայության (IND) ինտերնետային կայքը եթե ցանկանում եք ճշտել արդյո՞ք քաղաքացիական ինտեգրման տարրական քննությանը մասնակցելը նաև ձեր պարագայում պարտադիր է:

Կարելի է նաև զանգահարել Ներգաղթի և հպատակագրման ծառայությանը (IND):

Հեռախոս՝ 088 - 0430 430 (տեղական սակագին)

Արտերկրից՝ +31 88 0430 430

Իսկ եթե չեք կարող մասնակցել քննությանը:

Ունենալով չեն կարող քննություն հանձնել, օրինակ՝ առողջության խնդիրների պատճառով:

Եթե ցանկանում եք ծանոթանալ քննությունից ազատվելու պայմաններին ապա այցելել՝

www.rijksoverheid.nl/onderwerpen/nieuw-in-nederland/vraag-en-antwoord/kan-ik-ontheffing-krijgen-voor-een-inburgeringsexamen.html

Արտասահմանում քաղաքացիական ինտեգրման տարրական քննությունը հաջողությամբ հանձնելը

Նիդերլանդներում բնակություն հաստատելու համար ԵՄ-ից դուրս բնակվող քաղաքացիներին սովորաբար անհրաժեշտ է ունենալ կացության թույլտվություն:

Հիշյալ թույլտվությունը ձեռք բերելու համար նախ պետք է քաղաքացիական ինտեգրման տարրական քննությունը արտասահմանում հաջողությամբ հանձնել:

Որո՞նք են քաղաքացիական ինտեգրման տարրական քննության փուլերը:

Քննություն բաղկացած է 3 հատվածից՝

1. *Խոսելու հմտություններ* - դուք պետք է կարողանանք խոսել նիդերլանդերեն:
2. *Նվթերցանության հմտություններ* - դուք պետք է կարողանաք կարդալ նիդերլանդերեն:
3. *Նիդերլանդների հասարակության իմացություն* - դուք պետք է իմանաք, թե ինչպես ենք վերաբերվում միմյանց Նիդերլանդներում և որոնք են Նիդերլանդներում կիրառվող օրենքները:

Քաղաքացիական ինտեգրման տարրական քննության մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել www.naarnederland.nl կայքում:

Քաղաքացիական ինտեգրման տարրական քննությանը պատրաստվելը

Քաղաքացիական ինտեգրման տարրական քննությանը կարող եք պատրաստվել պաշտոնական ինքնուսույցի փաթեթի («Դեպի Նիդերլանդներ») օգնությամբ: Այս փաթեթը պարունակում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է նախապատրաստվելու քննության խոսելու հմտություններ,՝ ընթերցանության հմտություններ՝ և Նիդերլանդների հասարակության իմացություն՝

հատվածներին: Դուք կարող եք ներբեռնել այս փաթեթը անվճար կամ € 25.00 գնով պատվիրել այն www.naarnederland.nl կայքում:
Փաթեթը թողարկվում է 33 լեզուներով:
Կայքում տեղադրված են նաև [փորձնական թեստավորումներ](#)՝ քննությանը պատրաստվելու նպատակով:

Ո՞րտեղ կարող եք քննություն հանձնել:

- Նիդերլանդների դեսպանատանը
- Նիդերլանդների հյուպատոսությունում

Քաղաքացիական ինտեգրման տարրական քննությանը [գրանցվելիս](#) կարող եք տեղեկանալ ձեր երկրում դեսպանության կամ հյուպատոսության առկայության մասին: Եթե ձեր երկրում չկա դեսպանություն կամ հյուպատոսություն որտեղ դուք կարող եք մասնակցել քաղաքացիական ինտեգրման քննությանը՝ ապա անհրաժեշտ է մեկնել մեկ այլ երկիր: Գրանցվելու պահին ձեզ հնարավորություն է տրվում ընտրել քննության հանձնման վայրը:

Ինչպե՞ս գրանցվել:

[Լրացրեք գրանցման ձևը](#):

Քննության ամբողջ գումարը կազմում է € 150,- բոլոր հատվածների համար: Դուք կարող եք նաև հանձնել քննություններ անհատական հատվածներից, օրինակ՝ եթե ձեզ չի հաջողվել հատվածներից մեկը դրական արդյունքով հանձնել: Խոսելու հմտություններ հատվածի գինը կազմում է € 60: Ընթերցանության հմտությունները՝ € 50: Նիդերլանդների հասարակության իմացությունը՝ € 40:

Ի՞նչպիսին է ընթացակարգը գրանցումից հետո:

Քաղաքացիական ինտեգրման տարրական քննության համար գրանցվելուց հետո դուք կստանաք էլեկտրոնային փոստ՝ Կրթության Գործադիր Գործակալությունից (DUO): Այնտեղ նշված կլինի վճարման կարգը: Երբ DUO-ն ձեր գումարը ստանա ապա դուք կրկին կստանաք հաղորդագրություն DUO- ից: Այնտեղ նշված կլինի որ ձեր քննության համար կարող եք ժամադրություն նշանակել: Ժամադրությունը նշանակում էք դեսպանատան կամ հյուպատոսության հետ:

Եթե ցանկանում եք ավելին իմանալ քաղաքացիական ինտեգրման տարրական քննության մասին ապա այցելեք www.naarnederland.nl:

Հարցերի դեպքում զանգահարել Կենտրոնական

կառավարությանը՝ 1400 հեռախոսահամարով:

Արտասահմանից զանգահարեք + 31 77 4656767:

Ձեր հարցերը կարող եք նաև ուղել www.rijksoverheid.nl ի վիճոցով:

Ի՞նչպիսին է քննության օրվա ծրագիրը:

- Դուք ներկայացել եք նշանակված օրը և ժամին:
- Քննությանը ձեզ հետ բերում եք DUO- ից ստացված հաստատումը:
- Քննությանը բերում եք գունավոր անձնագրային նոր լուսանկար, որը համապատասխանում է [Նիդերլանդների պահանջներին](#):
- Ներկայանում եք ընդունարանի գրասեղանին:
- Ներկայացնում եք ձեր անձնագիրը կամ մեկ այլ [ինքնությունը հաստատող փաստաթուղթ](#):
- Աշխատակիցը կատարում է պատճենահանում:
- Վերցվում են ձեր մատնահետքերը:
- Բոլոր տվյալները մուտքագրվում են համակարգում:

Ինչպիսին է ընթացում քննությունը եթե բոլոր թեստավորումները կատարեք իրար ետևից:

- [Նիդերլանդների հասարակության](#) իմացության քննության մասին բացատրություններ:
- [Նիդերլանդների հասարակության](#) իմացության քննության հանձնում: Քննության առավելագույն տևողությունն է 30 րոպե:
- Ընդմիջում:
- [Ընթերցանության հմտություններ](#) քննության մասին բացատրություններ:
- [Ընթերցանության հմտություններ](#) քննության հանձնում: Քննության առավելագույն տևողությունն է 35 րոպե:
- Ընդմիջում:
- [Խոսելու հմտություններ](#) քննության մասին բացատրություններ:
- [Խոսելու հմտություններ](#) քննության հանձնում: Քննության առավելագույն տևողությունն է 30 րոպե:

Քննությունը հանձնվում է համակարգով: Չկա գրելու անհրաժեշտություն: Ընդհանուր առմամբ մոտ երկու ժամ գտնվելու եք դեսպանատանը կամ հյուպատոսարանում:

Ո՞ր դեպքում եք համարվում քննությունը անցած:

Դուք անցել եք եթե բավարար գնահատականով եք հանձնել քննության երեք հատվածները: Դուք յուրաքանչյուր հատվածի վերաբերյալ կտեղեկացվեք այն անցած կամ չանցած լինելու մասին: Եթե հատվածներից որևիցե մեկի դեպքում չեք անցել ապա հարկավոր է միայն այդ իսկ հատվածը կրկին հանձնել:

Ե՞րբ եք տեղեկացվելու արդյունքների մասին:

Դուք DUO- ի կողմից ութ շաբաթվա ընթացքում կտեղեկացվեք արդյունքների մասին: Հաճախ այդ մասին ավելի շուտ են տեղեկացնում քննության մասնակիցներին: Դուք յուրաքանչյուր հատվածի վերաբերյալ կտեղեկացվեք այն անցած կամ չանցած լինելու մասին: Այնուհետև կարող եք շարունակել ձեր MVV դիմումը ներկայացնելու ընթացակարգը: Սակայն կան նաև այլ պահանջներ որոնք պետք է բավարարվեն MVV դիմումի կապակցությամբ: Ներգաղթի և հպատակագրման ծառայությունը (IND) կարող է ձեզ այդ մասին ավելի մանրամասն տեղեկություններ տրամադրել: Այցելել՝ www.ind.nl: Դուք կարող եք նաև զանգահարել 088 - 0430 430 (տեղական սակագներ): Արտերկրից զանգահարեք +31 88 0430 430:

MVV դիմումը պետք է ներկայացված լինի քննությունը հաջողությամբ անցնելու պահից՝ մեկ տարվա ընթացքում: Եթե դուք ուշացրել եք՝ ապա հարկավոր է կրկին քննություններ հանձնել: Հաշվարկը ուժի մեջ է մտնում վերջին հատվածը հաջողությամբ անցնելու օրվանից:

Ի՞նչ անել եթե քննություն չեք անցել:

Դուք միշտ էլ կարող եք նորից քննություններ հանձնել: Սակայն հարկավոր է այդ դեպքում կրկին գրանցվել քաղաքացիական ինտեգրման տարրական քննության համար և կրկին վճարել:

Եթե ցանկանում եք ավելին իմանալ քննության մասին:

Այցելեք՝ www.naarnederland.nl: Բսկ հարցերի դեպքում զանգահարել Գենտրոնական կառավարություն՝ 1400 հեռախոսահամարով: Արտերկրից կարող եք զանգահարել + 31 77 4656767: Դուք կարող եք նաև էլեկտրոնային փոստ հղել, որի համար խորհուրդ է տրվում այցելել www.rijksoverheid.nl:

Ինտեգրումը Նիդերլանդներում

Եթե դուք ապրում եք Նիդերլանդներում ապա պետք է շարունակել խորացնել ինտեգրման ընթացքը: Մա հեշտացնում է Նիդերլանդների հասարակությանը մասնակցելու անհրաժեշտությունը և մեծացնում աշխատանք գտնելու հավանականությունը: Դրա համար էլ դուք պետք է նաև Նիդերլանդներում հաջողությամբ հանձնեք քաղաքացիական ինտեգրման քննությունները: Եթե ցանկանում եք ավելին իմանալ այդ մասին՝ ապա այցելեք www.inburgeren.nl: